

Վենետիկյ թ. 52 ձեռագիրը գրած է
 Կարապետ Զուղայեցի, որ՝ ինչպէս ինքը
 կը պատմէ՝ Մովսէս Կաթողիկոսի չուղե-
 լով անսալ, փախած «եկայ ի Համշէն» եւ
 հոս՝ ի յերկիրն Համշէն, ի վիճակս Խսա-
 չէքարոյ, կը գրէ այն Սաղմոսարանը
 ՌՀԹ (= 1630) թուին. իսկ այս ձեռա-
 գրին նկարող Գրիգորը կը խնդրէ յիշել
 «զպոնտացի Տէր Աւետիս, առաքելանման
 եպիսկոպոսիս», եւն. (Հ. Բ. Սարգսեան,
 «Յուցակ», սիւն 264—266): Այս թուա-
 կանիս տակաւին լիովին հայ-քրիստոնեայ
 էր երկիրը, եւ ասկէ ետքն է որ Համշէնի
 Հայերը բռնադատուած են՝ նա եւ զան-
 դուածային կերպով՝ մահմետական կրօնքն
 ընդունելու: ԺԷ. դարու վերջերը սկսած,
 աւելի եւս ԺԸ դարուն ընթացքին մեջ
 տիրող եղած է մահմետականութիւնը:
 Երբ Հ. Ղուկաս Վ. Ինճիճեան 1806 ին կը
 հրատարակէր իւր աշխարհագրութիւնը¹,
 իրաց վիճակն այն էր որ մեծամասնութիւնն
 արդէն մահմետական եղած էր. բայց կային
 տակաւին քրիստոնեայք ալ, որոնց եկեղե-
 ցիները կանգուն էին, սակայն քահանայ

¹ «Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի»: Մասն Ա, Հտր. Ա. յտկ., էջ 395—398: